



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№

2

Վաշիստի

Արքական պատմութեան
VON SOLUMARWIS
Օվ ակար - մարդութեան



891. 71/5
4-92

Ակար Բայ մահութեան ընթացքներ

10

73

~~0125-23/1/22~~

~~0125-27/1/20~~

2011 - 05

891.71.Ա.
Կ-99

Վ Ա Խ Զ Ե Տ Ի Զ

Կ Ա Ր Մ Ի Բ Լ Ա Գ Տ Ե Բ

1808
355716

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Օր. Ա. Տէր-Մարկոսեանց:



№ II.

ԹԻՖԼԻՑ

Ցովհաննէս Մարտիրոսեանցի Տպարանում:

1879


12 SEP 2014

5245

Дозволено цензурою. Тифлісъ, 1-го августа 1879 г.

Типографія И. Мартirosianца, на Орбеліановской улицѣ, д. № 5.

Бібліотека



Հ
4

I

Ով որ ճանապարհորդել է երկաթուղիով, նա
անկասկած տեսած կլինի, որ ճանապարհի երկու
կողմերում կան փոքրիկ և գեղեցիկ տնակներ, ո-
րոնք միմեանցից միքանի վերստ հեռու են շինած:
Ենցնում ես երկու կամ երեք վերստ, տեսնում ես
յանկարծ, որ երկաթուղու պատուհանից մի այդ-
պիսի տուն երևեցաւ. անցնում ես դարձեալ նոյն-
չափ ճանապարհ, մի ուրիշն ես տեսնում. դարձեալ
մի քանի վերստ, մի երրորդն ես տեսնում—ամեն
մի կայարանում մի տուն է շինած: Արանք շինած
են ուղիղ այն ճանապարհի մօտ, որի վերայ դար-

սած են ամուր քառակուսի գերաններ, իսկ այս
գերանների վերայ ամրացրած են երկաթէ նեղ
գծեր. Հեց այս գծերի վերայով են վազում երկա-
թուղու կառքերի անիւները: Ա ազում է մի կառք,
սորան կպած է մի ուրիշը, երրորդը, մինչև քսան,
քսանից էլ աւելի. իսկ սոցա առաջնից վազում է
շոգեկառքը, որ արձակում է խողովակներից եր-
բեմն ծուխ, երբեմն գոլորշե: Այս մի այնպիսի կառք
է, որ իր յետեկց քաշում է իւր նման քսանից ա-
ւելի կառքեր: Շուացնում է շոգեկառքը և այնպիս
քարձը, որ մի քանի վերատ հեռաւրութիւնից
լսվում է նորա ձայնը: Կա շուացնում է կառավարի
նման. «Օգոյշ, չեռու, ճանապարհ տուէք, կառքի
տակ կը ընկնէք» Ենցորդները լսում են չեռուից
շոգեկառքի շուոցը ու շտապում են ճանապարհից
չեռանալ. իսկ եթէ մի փոքր ուշանայ անցորդը և
շուտով չեռանայ, շոգեկառքը մի վայրկենում կտոր

կտոր կանէ նորան, այնպէս որ մեծ կտորը ա-
կանջը կմնայ:

Երկաթուղին թեթև բան չէ. Համարեած ամ-
բողջապէս երկաթից է, մանաւանդ նորա սուր
սուր անիւները մարդու մաս մաս կարող են անել:

Ալանում է շոգեկառքը երկաթէ գծերի
վրայով թեթևութեամբ, միայն մի խուլ ձայն է
լսվում անիւներից: Աստուած ոչ անէ, եթէ սրանց
տակ մեծ քար կամ գերան լնկնի. վայն եկել տո-
րել է. ամենքին. Ներքեւ կթուչի երկաթագծից մի
անիւ, նորա յետեկց մի ուրիշը, երրորդը, մի խօս-
քով ներքեւ կթուչեն բոլոր կառքերի անիւները՝
մինը միւսի յետեկց ու կտոր կտոր կլինեն: Խեղձ
մարդիկ. գիտէք ինչ է լինում նրանց վերջը—մէկի
ձեռքն է կոտրվում, միւսի ոտք փշվում, եր-
րորդի գլուխը ջարդվում, իսկ չորրորդի ով գիտէ
որ տեղն է վնասվում ու յաւիտեան այլանդակ

դառնում: Որպէս զի մարդիկ այսպիսի անբախ-
տութիւնների չպատահեն և չվախենան երկաթու-
ղու վերայ ճանապարհորդելուց, սորա համար շե-
նած են տնակներ, որոնց մէջ բնակվում են պա-
հապաններ: Այս պահապանները հսկում են որ եր-
կաթագծերը միշտ մաքուր լինին, որ նրանց վերայ
ոչ մի բան ընկած չլինի: Ըստեկառքերի անցնե-
լուց առաջ իւրաքանչիւր պահապան իւր տնակից
սկսած մինչև հարեան տնակը նայում է, որ մաքուր
լինի ճանապարհը և երբ տեսնում է, որ բոլո-
րը կարգին է, նա հանգիստ ու աներկիւղ բարձրաց-
նում է կանաչ դրօշակը՝ եթէ ցերեկ է, իսկ եթէ
գիշեր է՝ հասարակ (սպիտակ) լապտերը ու սպասում
է երկաթուղուն: Այս լապտերներն ու դրօշակները
չեռուից երեսում են: Մեքենայապետը տեսնում է
չեռուից լապտերը կամ դրօշակը և առանց երկիւղի
քշում է երկաթուղին: Կա թոշում է, աղաղա-

կում ու շուացնում, արձակելով խողովակներից եր-
բեմն ծուխ, երբեմն գոլորշի:

Եթէ պահապանը նկատում է, որ մի տեղ
կոտրուել է երկաթագիծը, կամ փառել է մի հին
գերան, իսկոյն կանգնում է նա այն տեղ կարմիր
դրօշակով, եթէ ցերեկ է և կարմիր լապտերով,
եթէ գիշեր է, որ իմաց տայ մեքենայապետին այս
վտանգը: Տեսնում է մեքենայապետը կարմիր նշա-
նակը, մեղմացնում է ընթացքը, կանգնեցնում է, որ
այնքան մարդկանց կեանքը վտանգի մէջ չձգէ:
Աստուած ոչ անէ, եթէ պահապանը կամ մեքե-
նայապետը անուշադիր լինեն կամ մոռանան իրանց
պարտականութիւնը այն ժամանակ կկորչեն և
այնքան մարդիկ և՛ մեքենան և՛ ամեն բան: Ու-
րեմն պահապանն էլ, մեքենայապետն էլ միշտ ար-
թոն պէտք է լինեն ու ամեն մի բոպէ աչքի ա-
ռաջ ունենան, թէ ի՞նչ դժբախտութիւն կարող է

պատահել, ի՞նչ վնասներ կարող են բերել հազարաւոր մարդկանց գլխին իրանց անզգուշութիւնով:

Իրաւ որ ծանր գործ է մեքենայապետի պաշտօնը, ծանր է նոյնպէս և պահապան լինելը:

II

Վնտառի մօտ, մէկ գեղեցիկ տան մէջ, որի մօտովն անցնում էին երկաթուղու գծերը, կենում էր երկաթուղու պահապան Արամը: Կա ծեր էր. նորակինը երեք տարի սորանից առաջ վախճանուել էր, թողնելով երեք որք—մէկ տասն և վեց տարեկան աղջեկ Մարիամ անունով և երկու տղայ՝ Հայկը և Տիգրանը. (Հայկը ութ տարեկան էր,) իսկ Տիգրանը երկու: Մարիամը առաջ սովորում էր քաղաքում, իսկ յետոյ մի տիկնոջ մօտ աղախին մտաւ և շատ ուշ ուշ էր գալիս հօրը տեսութիւն:

Խնամական պատճենների թանգարան
Խեղձ Արամը չափազանց շատ գործ ունէր. նա պէտք է նայէր երեխաներին. նրանց կերակրէր. նա (պէտք է Տիգրանի շորերը հագցնէր,) հանէր և պառկեցնէր. նա պէտք է ինամբ տանէր, եթէ նրանցից մէկը հիւանդանար: Եթէ միայն այդ լինէր նորագործը, ոչի՞նչ: Դժուարը երկաթուղու վերայի ծառայութիւնն էր—երկաթուղին (գիշեր—ցերեկ անդադար անցու դարձ էր անում) թէ մարդիկներով և թէ ապրանքներով ծանրաբեռնուած. պէտք է նայէ ամեն մի րոպէ երկաթագծերին ու իմաց տայ մեքենայապետին: Ծերունի Արամը շատ գործ ունի ամառը, իսկ ձմեռը՝ աւելի ևս: Եղանակը ցուրտ է, ձիւնը քուլայ քուլայ թափվում է երկնքից երկաթագծերի վերայ. պէտք է ձիւնը սրբել ու ճանապարհը մաքրել և այս ամենը իր ժամանակին, որ չենի թէ երկաթուղին վրայ համնի: Գիշերը դուրս է գալիս ծերունի Արամը լապ-

տերը ձեռքին, իսկ երեխաներին թողնում է մի-
այնակ տանը։ Դուրսը (սաստիկ ցուրտ է.) բուք է.
ձինի քուլաները պտտվում են օդի մէջ. փշում է
քամին, ապակիները քիչ է մնում կոտրատուեն ու
պատուչանների ճեղքերից շվշլոց է լսվում։

(Հայկն ու Տիգրանը քնած են միասին
մի անկողնում՝) ծածկուած չին մուշտակով։ Ահա
քամին ծեծում է դուռը. նա նորից կատաղե-
ցաւ և այնպէս դիպաւ գրանը, որ կարծես մի
մարդ ծեծում լինի։ (Զարթում է փոքրիկ Տիգ-
րանը.) (Վախից վեր է թռչում. նստում է անկողնի
մէջ.) սկսում է աչքերը տրորել. լաց լինել ու զար-
թեցնել Հայկին։ Տեսնում է Հայկը, որ Հայրը
տանը չէ, սկսում է ինքը գուրզուրել ու հանգրս-
տացնել Տիգրանին։

— Ի՞նչո՞ւ ես վախենում, չոգիս, ես չո՞քեղ
մօտ եմ. քնիր հանգիստ։

Կայս ասելով՝ Հայկը գրկախառնում է փոքրի-
կին. նա էլ պինդ կպչում է եղօր կրծքին ու
քնում, իսկ Հայկը չէ քնում, նա սպասում է
մինչեւ որ Տիգրանը քնէ։ Քամին դեռ էլի կա-
տաղութեամբ փշում է։

Ահա հեռուից մի խուլ ձայն է հասնում Հայ-
կի ականջին, որ հետզհետէ սաստկանում է. լըս-
վում է շուրջ և ահա մի քանի վայրկեան չան-
ցած՝ գոռգոռալով ու աղաղակելով անցաւ երկա-
թուղին նրանց պատուչանների մօտով։

Տիգրանը նորից զարթեցաւ, վերթռաւ ան-
կողնից ու դողդողում էր ամբողջ մարմնով։

— Ո՞ի՛ վախիր, սիրելի Տիգրան, երկաթուղին
էր, անցաւ. այ, Հայրիկն էլ իսկոյն կգայ։

Ահա դուռը ծեծեց. մտնում է հայրը լապտերը
ձեռքին, ձիւնաթաթախ, մօրուսից ձիւնէ պատ-
րոյկներ են կախուած։ նա լապտերը մի կողմը

մահաւուց մահաւուց մահաւուց

դրեց. սենեակի մի անկիւնումը թափ տուեց իւր
վերայի ձիւնը. հանեց ոչխարի մուշտակը և մօտե-
ցաւ երեխաներին:

— Ինչո՞ւ մինչև այժմ չէք քնած, որդիք:

— Տիգրանը շուտ շուտ վախից զարթում էր
և ինձ էլ չէր թողնում քնել:

— Ի՞նչ կայ վախենալու, հոգիս: Այժմ հան-
գիստ քնեցէք, ես էլ իսկոյն կքնեմ ձեզ հետ մի ժամ:

Օերունի Արամը համբուրեց երեխաներին,
խաչակնքեց ու ինքն էլ նրանց կողքին պառկեց
հանգստանալու:

Երեխաների քունը տարաւ, իսկ ծերունին դեռ
արթուն էր. նա վախենում էր, շինի թէ քունը
տանէ և իւր գործից ուշանայ: Իսյց ի՞նչպէս
խեղճի քունը տանում է. աչքերը չէ կարողանում
բաց անել՝ յոզնած ու դադրած է, համարեա՛ թէ
սառել է ցրտից: Ա երջապէս ծերունի Արամը վեր

առաւ իւր հին մուշտակը և ծածկվեցաւ, որ գոնէ
փոքր ինչ տաքանայ. քունը տարաւ: Թէւ քնած
է նա, բայց մի ականջը դուրսն է, որ իմանայ չէ
շուացնում արդեօք երկաթուղին:

Քամին փչում է դարձեալ:

III

(Զմեոն անցաւ: Եկաւ ամառը:) Օերունի
Արամի գործերն աւելի թեթևացան. երեխաների
բանն էլ լաւացաւ, որովհետեւ առաւօտից մինչև ե-
րեկոյ խաղում են դուրսը կամ գնում են անտառը՝
սունկեր ժողովում և կամ զանազան ծաղիկներ ու
պտուղներ հաւաքում: Հայկը մի ձեռքով բռնած
ունի զամբիւղը, որի մէջ հաւաքել ու լցրել է շատ
տեսակ ծաղիկներ ու մրգեր, իսկ միւս ձեռքով
բռնած ունի փոքրիկ Տիգրանի ձեռքը ու ման է

ածում ամեն տեղ իւր հետ։ Տիգրանը հազիւ է
կարողանում շարժուել. խճճվում են խեղճի ոսքերը
խոտերի ու թփերի մէջ ու քիչ է մնում վայր
ընկնի երեսի վերայ։ Այսպէս հաւաքում են զանա-
զան ծաղեկներ ու պտուղներ ու յետ դառնում
տուն։ Տիգրանը դեղին ջանգիւլումից և կարմիր
պուտերից կապած ունի մի փունջ ու ձեռին բըռ-
նած, իսկ Հայկը զարդարել է նորա գլուխը կար-
միր պսակով. թշերը շոգից այնպէս կարմրել են,
որ մատով խփես, արիւն կկաթի. աչքերը կրակ
դարձել իսկ շրթունքները կարմրել են կատուի
խաղող ուտելուց։ Ուրախ ուրախ բարձրանում է
փոքրիկ Տիգրանը բլրակի վերայ. բլրակը նորան
ահագին սար է երեւում. յոգնում ու դաղրում է
խեղճը. լեզուն բերանից հանել է և հազիւ թէ կա-
րողանում է շունչ առնել, իսկ Հայկը բռնած ունի
յետերից նորա թևը ու թաքուն ծիծաղում, ուրա-

իսանում է, երբ նայում է իւր փոքրիկ եղօր վերայ։
Այս վերադարձան նրանք տուն. նստեցան
դուրսը խրճիթի ստուերի տակ և սպասում են
հայրիկին։ Հայկը հանում է զամբիւղեց հաւաքած
սունկերը ու ջոկջկում. ծաղեկներից փունջեր է
կապում. խոտերից և ծաղեկների թերթերից սրբն-
գահարներ է շինում ու սրնգացնում, չէնց կարծես
փող է փչում. ճշանակներ է շինում ու ծուղրուղու
կանչել տալիս և այսպէս ուրախ ուրախ ժամանակ
են անցկացնում։ Անտառը թէւ գեղեցիկ էր,
բայց այստեղ էլ վատ չէ. կանաչ խոտերը
նրանց գորգն է, իսկ տան ստուերը՝ նոցա
հովանոցը. արեգակն այնպէս է այրում, որ նորա
տակ մանգալն անկարելի է. աչա ագուալը նստել
է հեռագրական սիւնի վերայ, քիչ է մնում թու-
րացած ներքեւ գլորուի, թևերը փոել է ու բերանը
բաց արել։ Միայն թեթևաթոիչ ծիծեռնակները չեն

վախենում շոգից, ուրախ ուրախ ձկվացնում են,
երգում, թռչում են օդի մէջ ու կտուցներով բըռ-
նում զանազան մժեղներ ու թիթեռներ. յետոյ երբ
յոգնում են, գալիս են, նստում հեռագրական լարի
վերայ:

— Տես, Տիգրան, հայրիկը գալիս է, ասում
է Հայկը ու կայծակի նման թռչում, վազում է
նորա առաջ:

Վեր է թռչում Տիգրանն էլ, ուզում է ինքն
էլ հօր առաջը զնալ բայց որտեղ կհանի եղօրը.
կանգնում է խեղճը բրակի վերայ. յուսահատուած
լաց է լինում ու բռնով արտասուքը սրբում: Իսկ
քամին փչում է ու ցրվում նորա սաթի պէս և
և մետաքսի նման փափուկ մազերը:


Հայրն եկաւ ու մի փոքր բարկացաւ նորա վերայ,
որ Տիգրանին յետ էր թողել. յետոյ գլխարկը
հանեց և նստեց որդւոց կողքին ստուերի տակը.

Խեղճ ծերունու երեսը աշխատելուց ու շոգից
կարմրել ու խորովել էր և քրտինքը կաթիլ կա
թիլ էր գլորվում այտերի վերայից:
— Հայկ, մի աման թան տուր խմելու, ասում
է նա որդուն:

*1008
357/16*
Վազում է Հայկը, բերում մի մեծ ամանով թան
ու խմում են երեքն էլ սա մի փոքր զովացնում
է նորանցը. նրանք երեքն էլ շոգում ու ծարաւ
էին: Հենց նոր նստել էր Արամը հանգստանալու,
հեռուից երեւցաւ ամպի նման մի գոլրշի, որ
շուացնում էր. իսկոյն հանեց գօտկի տակից փայտի
վերայ փաթաթած կանաչ դրօշակը, բաց արեց
ու կանգնեցաւ ձանապարհի մօտ:

— Հայրիկ, տուր ես քո փոխանակ կբռնեմ
դրօշակը, դու յոգնած ես, ասում է Հայկը:

Այս որ լսում է Տիգրանը, նա էլ է ուզում բըռ-
նել, ձեռքերը պարզում է դեպի դրօշակը: Այն ժա-



մանակ հայրը տաղիս է Տիգրանին կանաչ դրօշակը: Հայկն էլ Տիգրանին բռնում է իւր ձեռքերի վերայ ու այսպէս կանգնում են երկուսը միամին և սպասում երկաթուղուն:

Անցնում է նրանց մօտով երկաթուղին. ճանապարհորդները գուրս են նայում կառքերի պատուհաններից. Նայում են այս փոքրիկներին ու ծիծաղումնրանց վերայ:

Ու՞զ, ինչ մեծ մեծ պահապաններ են, գովեց ճանապարհորդներից մէկը և անյայտացաւ մի րոպէում:

Համբուրեց Արամը Տիգրանին. ապրես, որդի, Հիմիկուանից օգնում ես հօրդ: *Խաչը*

— Իսկ ինձ չե՞ս գովում, չե՞ որ ես էլ Տիգրանին բռնած ունեի, վրայ բերեց Հայկը:

— Աւելի լաւ է որ դու չպարծենաս. գնա՛, պատրաստիր ինչ որ հարկաւոր է, որ նստենք Ճաշելու:

— Այս բոպէիս կըերեմ, ասում է ուրախ ուրախ թռչկոտալով Հայկը ու գնում է Ճաշի պատրաստութիւնը տեսնելու:

Կէս ժամից յետոյ ծերունին իւր որդկերանցով նստեցին Ճաշելու:

19.

IV

(ինչ թէլ)

Տիրում էր ծերունի Արամը, որ իւր աղջեկ Վարիամը իրան մօտ չէր կենում. Նա միևնոյն ժամանակ ցաւում էր միւս փոքր որդկերանց վերայ, որ միշտ միայնակ են նրանք, չկայ մէկը, որ զգուեն նրանց. բայց խեղճը աւելի տխրում էր, երբ մնաբերում էր նրանց մօր մահը, որից յետոյ խեղճ մասուկները ոչ զգուող ունեին և ոչ ինամբ տանող: Այս բաները աչքի առաջ ունենալով, մնածեց ծերունին Վարիամին քաղաքից տուն բերել:

111

Աս արդէս տասն և ինն տարեկան էր, խելօք
ու համեստ աղջիկ. իմանում էր լաւ կարել կար-
դալ և գրել: Արամը բերում է նորան քաղաքից իւր
մօտ, որ նայէ, ինսամք տանէ երեխաններին ու նը-
րանց մօտը լինի:

Ինչպէս որ մոտածեց, այնպէս էլ արեց: Մա-
րիամն եկաւ քաղաքից. ի՞նչ զեղեցիկ ու բարեսիրտ
աղջիկ էր. թէպէտ շատ բարձրահասակ չէր, բայց
շատ սիրուն կազմուածք ունէր. այտերը կարմիր
էին վարդի նման, ամեն մի աչքը կարծես մի ա-
րեգակ լինէր. մազերը սե, ինչպէս սաթ, ծիծաղը
չէր չեռանում երեսից: Թէւ առաջ էլ շատ էին
սիրում նորան Հայկն ու Տիգրանը, բայց այժմ
աւելի ևս սիրեցին:

Ով կարող է պատմել չօր ուրախութիւնը.
նայում էր աղջկան ու հիանում նորա աննման ու
անմեղ պատկերի վերայ. Ժպտում էր ուրախու-

թիւնից, գուրգուրում ու համբուրում մէկ նորան,
մէկ փոքրիկներին: Տան մէջ ամեն բան այնուչե-
տև կարգին էր—օդը մաքուր լինելու համար, նա
շուտ շուտ բաց էր անում պատուհաններն ու դու-
ռը. դու էլ չես զգայ այնտեղ ոչ մի հոտ, այժմ
ամեն բան իւր տեղն է դարսած—ներքնատան բա-
ները ներքնատուն է տարած, տանինը՝ տանն է
թողած, բայց չկարծէք, թէ այնպէս ածած մի-
մեանց վերայ, ոչ կարգին դասաւորած ամեն բան
առանձին առանձին ու փակած: Պատուհանների
վերայ դարսած էին ծաղկամանները, որոնցից անու-
շահոտութիւն էր տարածվում սենեակի մէջ:

Մարիամը շատ էր սիրում իւր փոքր եղբայր-
ներին ու ամբողջ օրեր նրանց չետ էր անցկաց-
նում: Այս նա նստած է նոցա կողքին տան
ստուերի տակ ու կարում տօների համար նոր շո-
րեր: Հայկը չէ չեռանում նորանից, ծունկը ծնկին

հայկ 265

կպցրած, գիրքը ձեռին, բարձր ձայնով կարդում է, իսկ Վարիամը ուղղում է սխալներն ու չհասկացած բառերը բացատրում—հասկացնում է։ Տիգրանը դեռ փոքր էր, նա դեռ չէր սովորում կարդալ, շատ էր սիրում խաղալ, դորա համար նա միշտ ճանապարհից կաւ ու աւազ էր հաւաքում, ածում էր իւր փեշի մէջ, բերում էր իւր քրոջ մօտ, ցեխ էր անում ու տուն շինում։ Ճաղիկներ էր հաւաքում, տնկում և փայտի կտորներով նրանց շուրջը ցանկապատ քաշում և այսպէս իւր համար պարտէզ շինում։ Խաղում էր Տիգրանը կամաց կամաց երգելով, իսկ մի ականջով լսում էր հայկի կարդալուն և ինքն իրան ծիծաղում, որպէս թէ ինքն էլ մի բան է հասկանում։

Վութն ընկաւ—արդէն գիշեր է։ Արամն ընթրիք արեց իւր ընտանիքի հետ և ճանապարհ ընկաւ։ Տիգրանի քունը տանում է, սկսեց յօրանջել


բերանը բաց ու խուփ անել ու աչքերը փակել։ Վարիամը շուտով պատրաստեց նորա համար անկողին. ուզում էր հայկի համար էլ պատրաստել բայց նա չժողեց. «Քուրիկ, ես ինքս կարող եմ իմ անկողինը պատրաստել, ու Տիգրանին քնացրու։ Հայկն արդէն տան և մէկ տարեկան էր. ինքը կարողանում էր ամեն բան շինել։

Քնելուց առաջ երկուսն էլ աղօթք արին և այնպէս գնացին պառկելու, իսկ Վարիամը մօտ գնաց, համբուրեց ու խաչակնքեց նրանց։

Ի՞նչպէս շուտով քաղցր քուն մտան հայկն ու Տիգրանը։ Դեռ վաղ էր։ Վարիամը նստեց սեղանի մօտ, սկսեց կարել երեխաների շորերը։ Ականի վերայ դրած մոմը շատ պայծառ լուսաւորում էր սենեակը. Վարիամը նկատեց, որ մոմը երեխաների աչքի դիմացն էր վառվում. վերկացաւ, աթոռներ դարսեց նոցա մահճակաների առաջ։ ա-

թոռների վերայ էլ մի սաւան փռեց որ մոմի լցուը
աչքերը չ'ձակէ: Այժմ միջնումը աւելի հանգիստ
կ'քննեն նրանք: Ոչ մի ձայն չէր լավում տանը, բա-
ցի ծղրիդների ճռճռոցից ու ժամացոյցի ճօճանակի
շխկչելոցից, որը մի փոքր ճռնչում էր: Երեւի
ժանդուտել էր:

ՎԻՐԱՆ



Մարիամը կարեց—վերջացրեց հայկի և Տիգ-
րանի շորերը և աչա հասաւ այն տօնը, որի հա-
մար կարվում էին նոր շորերը: Այս տօնը Աս-
տուածածնայ տօնն էր:

Մարիամը վաղ առաւօտը սկսեց պատրաստվել,
որ իւր եղբայրների հետ միասին գնան հարեան
գիւղը ուխտ անելու. այնտեղից մտաղիր էին իւր-
եանց ազգականների մօտ վերադառնալ և ամբողջ

օրն այնտեղ անցկացնել: Սայլը դրանը պատրաստ
նրանց էր սպասում: Զարդարուեցան հայկն ու
Տիգրանը իրանց նոր շորերով. Մարիամն էլ նոյն-
պէս գեղեցիկ շորեր հագաւ. Հիւսեց իւր սե սաթի
նման իսկտ մազերը և երկու ծամ արեց ու կար-
միր ժապաւէնով կապեց:

Այսպէս զարդարուած սայլ նստեցան: Ու-
րախանում են երեխանները սայլի մէջ նստած. ու-
րախանում է նոյնպէս ծերունի Արամը և ժպտում
է, նայելով նրանց վերայ. ուրախ են ամենքը, մին-
չե անգամ ժպտում է սայլապանը որ նոյնպէս
զարդարուել է տօնի համար: Անցնում է սայլը
փոշոտ ճանապարհի վերայով, երեխանները ձայն են
տալիս իրանց հօրը սայլի միջեց. «Մնաս բարե,
հայրիկ, մնաս բարե»՝ Ծաերունին էլ գլխով նշան է
տալիս. «Գնաք բարե» է ասում և ուրախ ժպտում:

Անցաւ սայլը դաշտավայրից. մտաւ անտառը

ու կանաչի մէջ անյայտացաւ:

Եղանակը պարզ էր ու պայծառ. ոչ մի ամպ չէր երևում երկնքի երեսին. օրը շատ տաք էր և տօթ: «Կայում է Արամը երկնքին ու մտածում ինքն իրան. Շրկինքը պարզ է, բայց անձրև կ'գայ, այնպէս տօթ է որ մարդ դժուարութեամբ է շունչ առնում:»

Արամը ստոյգ գուշակեց. արդարեւ մինչև երեկոյ օրը շատ տաք էր ու պարզ. երեկոյեան ըսկ-սեցին հաւաքուել ամպերը և չեռուից կամաց կա-մաց առաջ էին գալիս: Լոռութիւն էր թափա-ւորում ամեն տեղ: Թառչունները լոել էին անտառի մէջ. ծառերի վերայ ոչ մի տերեւ չէր շարժվում. ծղրիդներն ու ճպուռներն անգամ լոել էին, միայն երբեմն երբեմն լսվում էր կտցահարի կտկտացնելու մեղուի բղզոցը, որը շտապում է դէպի իւր փեթակը: Ակսում է ամեն տեղ մթնել՝ օդը աւելի ծան-

րացաւ. Հեռուից երբեմն երբեմն փայլում է փայ-
լակը: Օառերի տերեւները շարժուեցան, փոշի
բարձրացաւ ու մի թեթև քամի փշելով, երկինքն
սկսեց մթնել: Ամպերի գոռոցը քանի գնում է, սաստկանում է. բարձր եղեխները խշխացին. ան-
տառը շարժվում է. կատաղի փոթորիկը քիչ է
մնում ծառերը արմատից հանէ. վայր է գլորում
հեռագրական սիւնը և լարերը—կտոր կտոր է ու-
զում անել: Վութ խաւարը երկիրը պատեց. փայ-
լատակում է. փայլի յետեկից լուսաւորվում է շրջա-
կայքը, այնպէս որ կարծես ցերեկ լինի: Անձրեւ հե-
ղեղի նման թափիվում է երկնքից:

Խեղճ՝ Արամը մի շապկի մէջ, ամբողջ մար-
մնով թաց, վազում է լապտերը ձեռքին, կանդ-
նում է իր տան առաջ բարձր եղենու տակ և ոպա-
սում երկաթուղուն. կպչում է խեղճը ծառի բնին,
հանում է գլխարկը և երեսը խաչակնքում:

Յանկարծ սարսափելի փայլակը կուբացրեց նորան, կայծակի ձայնը խլացրեց խեղճին ու գետին գլորեց:

Կայծակն ընկաւ երկաթաղծերի վերայ, կտոր կտոր արեց ու այս այն կողմը ցրուեց: Արամը ընկաւ գետնի վերայ կիսամեռ: Կրակ ընկաւ խեղճ ծերունու տանը: Այնպէս մեծ էր կրակի լոյսը, որ շուրջը ամեն բան երևում էր, ինչպէս ցերեկը. ահա նա մի փոքր բարձրացաւ տեղից, հառաջեց ու նորից ընկաւ գետնի վերայ, մարդ չկայ նորա մօտ. միայնակ է նա և անօդնական: «Երա աչքերը նայում են վայրենաբար չորս կողմը — Ճանապարհի վերայ, նորից բարձրացաւ տեղից, ուշքի եկաւ և ինչ է տեմնում—տունը կրակ ընկած, երկաթաղծերը կտոր կտոր արած ու այս այն կողմը ցըրուած...

— Աստուած իմ, ի՞նչ պիտի լինի խեղճ Ճա-

նապարհորդների վեճակը. կկործանուին, ամենքը կկործանուին», աղաղակում է նա և ժողովելով իր վերջին ոյժը՝ աշխատում է ոտքի կանգնել:

Փոթորիկը դադարեցաւ. որոտն անցաւ: Հեռուից լսուեցաւ շոգեկառքի շուոցը. «Դալիս է, զալիս է, շուտ, շուտ», և Արամը չ'ունենալով ձեռին կարմիր լապտեր, շուտով վառեց փոթորիկից հանգցրած հասարակ լապտերը. պատուեց իւրկարմիր շապկից մի կտոր ու նորանով փաթաթեց լապտերը. յետոյ աւելացրեց լոյսը և հազիւնատած գետնի վերայ, բարձրացրեց լապտերը բարձրը ու բարձր: Խակ տունը շարունակում է այրուել. այրվում է ծերունու ունեցած չունեցածը, միայն կրակի երկար լեզուներն են երևում և կայծերն այս ու այն կողմը ընկնում:

«Նայում է Արամը հեռուից, տրաքում է նորասիրտը, աչքերը մլթնում. հեռու հեռու, ճանա-

պարհի վերայ երկու կրակ երևեցաւ. սլանում է շոգեկառքը և աչա սլանալով միանգամից կկոտրտուի և ամենքին կկործանէ....: Աստուած իմ, միթէ մեքենայապետը չի տեսնի Արամի կարմիր լսապտերը:

Ոչ նա տեսաւ ու մեղմացրեց ընթացքը. իսկ Արամը բռնած ունի իւր գլխի վերայ լսապտերը, հաւաքում է իւր վերջին ոյժը. աչա արդէն մօտ է մեքենան. կամաց կամաց է գալիս. մօտեցաւ ու կանգնեցաւ. Արամը թուլացաւ, վայր ձգեց ձեռքից լսապտերը և ուշաթափուեց:

Երկաթուղու մէջ իրար դիպան ամենքը. ցած թռաւ մեքենայապետը և կանչեց ծառային. ճանապարհորդները հաւաքուեցան ու նայում են: Տեսնում են՝ պահապանի տունը այրվում է, ճանապարհը փորփորած է, երկաթաղձերը կոտրտած ու այս և այն կողմն ընկած. «Ուր է պահապանը, որ-

տեղ է գնացել», հարցնում է գլխաւոր ծառան և տեսնում է, որ պահապանը ընկած է գետնի վերայ ճանապարհի մօտ և նորա մօտ դրած է կարմիր կտորով փաթաթած լապտերը: Գլխաւոր ծառան նայեց փորփորած ճանապարհի և այրուող տան վերայ և իսկոյն իմացաւ, որ այս ամենը կայծակի բանն է:

Ճանապարհորդների մէջ մի բժիշկ կար. նա իսկոյն եկաւ. լաւ զննեց նորան. ուշքի բերեց և ասաց, որ շուտով կլաւանայ բոլորովին, որովհետեւ կայծակը չի դիպել, այլ միայն խլացրել է, միևնոյն ժամանակ հրամայեց բժիշկը, որ մի փոքր ժամանակ հանգիստ թողնեն գետնի վերայ պառկած, ու տեղիցը շարժեն: «Կորան շըջապատել են մարդիկ. ճանապարհորդներից մի քանիսը լաց են լինում, կարծում են, որ մեռնում է, իսկ Արամը փոքր առ փոքր ուշքի է գալիս:

Յանկարծ մի աղաղակի ու լացի ձայն լսուեցաւ:

Ո՞վ է այս: Ի՞նչ պատահեցաւ:

Արամի երեխաների ձայնն է, տուն են դարձել: Տեսաւ Մարիամը, որ իրանց տունը կրակ է ընկել, վախեցաւ, աղաղակեց, վերցրեց ձեռքին Տիգրանին և լացով ու աղաղակով վազեց զէպի տունը: Վազում է մէկ տեղեց միւս տեղ խելազարի նման, հօրը պտուտում, իսկ նորա յետեից փեշը բռնած՝ արտասուալից ու գունաթափ վազում է Հայկը: Տեսաւ Մարիամը հօրը գետնի վերայ ընկած և քիչ մնաց ինքն էլ նորա կողքին վայր ընկնէր. բայց չժողեցին:

— Ի՞նչ ես լաց լինում, աղջեկս, ես կենդանի եմ, մի՛ վախենար, ասում է Արամը և տեղեց բարձրանում:

Փաթաթվում է Մարիամը հօր պարանոցովը, փաթաթվում են և երեխաներն, դողդողում աչից

ու լաց լինում: Համբուրում է նրանց ծերունին և ինքն էլ լաց է լինում:

Ուշքի եկաւ բոլորովին Արամը և պատմեց ամենքին, ինչ որ պատահել էր. պատմեց, թէ ինչ պէս Աստուած օգնեց և կարմիր լսպտեր հնարեց ու այսքան մարդկանց կեանքը ազատեց մահից:

Այս որ լսեցին Ճանապարհորդները, մօտեցան ծերունի Արամին և նորա ձեռքը սեղմելով, անվերջ շնորհակալութիւններ էին անում....

Հայերէն մանկական գրքերի հրատարակողներից:

Աերկայ «Կարմիր Լապտեր» գրքոյիլ հէնց այն Վուշտիչի
հեղինակութիւնն է, որի գէմ յարձակուեցաւ «Մանկավարժական
Թերթի», քննադատը Երևի շատերը կհետաքրլքրուեն իմանալ թէ
ինչպէս վերաբերուեց ուսուց մամուլը գէպի այդ գրքոյիլ. ահա
թէ ինչ պատճառաւ մենք աւելորդ չը համարեցինք մատնացոյց
անել այն յօդուածների վերայ, որոնց մէջ ընթերցողը կարող է
գտնել կարծիքներ թէ հակառակ և թէ յօդուա այդ գրքի:
Голосъ № 358, 1878 г., Русская Правда № 89, 1878 г., Пе-
даг. Музей № 12, 1878 г., Дѣло № 3, 1879 г., Воспитаніе и
Обученіе (быв. Дѣтскій Садъ) № 1, 1879 г., Женск. Обр.
№ 5, 1879 г. Յաւում ենք, որ մնացած պարբերական թերթերի
համարները չենք կարողանում յիշել:

Թող «Կարմիր Լապտեր» գրքոյի հեղինակը ներողամիտ գրտ-
նուի գէպի թարգմանչուհին այն փոփոխութիւնների մասին, որ նա
արել է թէ գրքոյի հերոսների անունների և թէ մը քանի մանր
բանների մէջ:

«Կարմիր Լապտերի» հրատարակութեան մանրամասն հաշիւը
կտպուի հետևեալ գրքի վերջը, որովհետեւ բոլը ծախսերը անկա-
րելի եղաւ Ճիշդ որոշել մինչև գրքոյի վերջնական հրատարակու-
թիւնը: Միայն գեռ այսքանը կարելի է ասել որ «Կարմիր Լապտե-
րը» տպուեցաւ 1500 օրինակ, որոնցից կէսը կազմած է և բոլոր
1500 օրինակի վերայ մօտաւորապէս կը ծախսուի 480 ըուբը:

«ԹՐԱՎԱՄՅԱԳ ՄԵՂՈՆ» ՊՐՔՇՈՒԿԻ ԼՍԱԳՈՒԵՑԻՆ ՀԱՉԻՒ:

Պ. Նվանին աւելորդ զոյնի համար —— 6 ր.

Պատկերների համար էլե թուղթ —— 4 ր. 50 կ.

Կազմարարին էլե 7 զբքի համար —— 49 կ.

10 ր. 99 կ.

Տպուեցաւ 1257 օրինակ բոլորն էլ կազմած. նրանցից 57
օրինակ բաժանուեցաւ ձրի իրրե ընծայ, որոնց թվում և 20 օրի-
նակ Աթրաբատեան ընկերութեանս ուղարկուեցաւ, իսկ 1200 օրի-
նակ ծախու տրուեցաւ: Այդ բոլորի ծախոր եղաւ 403 ր. 42 կ.:

Զոհամբերութիւններ եղան հետեւել անձինքներից.

Նիկողայոս Միրզոյեան —— 100 ր.

Արգիս Տէր-Յովշաննիսեսն —— 50 ր.

Արտեմ Դրիգորեան —— 50 ր.

Եղբարք Աբովեանցներ —— 10 ր.

Յովշաննէս Քեմինեան —— 10 ր.

Գ. Մ—ից 300 արկղ շարժական տառերս որ ծախվում են «Կեռ-
տրօնական գրավաճառանոցում իւրաքանչիւր արկղ 18 կոպէկով:

Արբազան պարտք ենք համարում մեր խորին շնորհակալու-
թիւնը յայտնել և ենտրօնական գրավաճառանոցին այն բանի հա-
մար, որ նա յանձն առաւ վաճառել շարժական տառերը առա-
կօմիսայի և որը առհասարակ օգնում է զբքերի հրատարակու-
թեան գործին: Ենորհակալութիւն ենք յայտնում նոյնպէս պ.
Մարտիրոսեանցին, որը իւրաք համակրելով մանկական զբքերի հրա-
տարակութեան, իրա կողմից ևս բաւականին զիջումներ է արել:

Երրորդ գիրքը Բիչէր Ստոուի Թովմաս եղբօր տնակը՝ կլնի,
փոխազրութիւն մանուկների համար Արաբել Պալմերի և պատկեր-
ներով, թարգմանութիւն 0ր. Ն. Տէր—Մարկոսեանի:



Հայր



5245

